

մասին համաձայն մինչև 1659 եպիսկոպոս էր Ֆահրապատու, իսկ 1659-էն վերջ «Արքեպիսկոպոս Նախջալանայ եւ առաջնորդ վանաց եւ վիճակիմ Երևանայ Սրբոյն Կարապետին:» Այս հակասութիւնը նոյն տապանադրին մէջ եղած է որովհետեւ տապանադրին շարադրողը չէ ըմբռնած ըսուածին կարեւորութիւնը եւ չէ խորհած որ Առաքելի կողմէ յիշուած այս եկեղեցական պաշտօնները ոչ միայն գոյութիւն չունին այլ ասոնք սրտաւոր կերպով ստեղծուած են Առաքելի իսկ կողմէ՝ ինքզինքին եկեղեցական վարկ մը, զիրք մը տուած ըլլալու համար: Մենք աւելի վերջը պիտի ցոյց տանք որ այդ պաշտօնները գոյութիւն չունէին:

Տապանադրին համաձայն Առաքել 1659-ին Հոռոմ եկած է կ'ըսուի ուր ընդունած է հոռոմէադաւանութիւնը: Ոչ միայն տեղեկութիւն կը պակսի 1653—1659 շրջանի իր կեանքին եւ գործունէութեան վրայ, այլ տեղեկութիւն չը գտայ Հաւատոյ Տարածման Ժողովոյն Դիւանին մէջ անոր Հոռոմ գալուն մասին: Տեղեկութիւն չունիմ նաեւ 1659-էն մինչև 1667 թուական Առաքելի մասին: 1667-ին զինքը յիշուած կը գտնենք «Արքեպիսկոպոս Երեւանի:»

Ըսինք թէ բոլորովին մտացածին եւ ստապատում են իր տխուրները: Եպիսկոպոս Ֆահրապատու գոյութիւն չունի այլ կայ պատուակալ արքեպիսկոպոսութիւն: Չէր կրնար Նախիջևանի «արքեպիսկոպոս» ըլլալ Լուսաւորչական հատուածին, քանի որ Նախիջևանի մէջ Լուսաւորչականները միայն եպիսկոպոսութիւն ունէին: Հոռոմէադաւաններ արդարեւ ունէին արքեպիսկոպոսութիւն, որուն զահին վրայ Առաքել չենք գտներ: Ահա գաւազանադիր մը:

Բերթալի մինչև 1668:

Ֆրա Մատթէոս Յովհաննէս Մայիս 14 1668-էն մինչև 1674:

Ֆրա Մատթէոս Յովհաննէսի մահւնէն (1674) մինչև Օգոստոս 14, 1681 ամիսը թափուր մնաց: Այդ ատեն ընտրուեցաւ Ֆրա Սեպասդիան Նաբի:

Գալով «Երեւանի Արքեպիսկոպոս» կոչումին, Լուսաւորչական Արքեպիս-

կոպոսներուն շարքին եւս չենք գտներ զինքը: Իսկ հոռոմէադաւանները հոն Արքեպիսկոպոսութիւն կամ Եպիսկոպոսութիւն չունէին: Պէտք է խորհիլ որ Առաքելի այս տխուրն ալ մտացածին է եւ սուտ: Կ'երեւի թէ դոնէ 1667-էն սկսելով Երեւանի մէջ հոռոմէադաւանական քարոզչութեամբ զբաղած է: Այս մասին կ'օգտուինք Հաւատոյ Տարածման Ժողովոյն Դիւանին, ուր արձանագրեալ կը գտնենք. «Գերապայծառ Առաքել, բարձրութեան ներկայացնելու համար Հայ արքեպիսկոպոսը, Հոռոմ եկած է ձեր որ, Երեւանի մէջ եկեղեցի մը շինած ըլլալով օգնութեամբ Հայ հոռոմէադաւան Ազարեայի հետ (անձ մը որ լաւ ծանօթ է Սրբազան Ժողովոյն) ուր Կարուչին քարոզչները պիտի պաշտօնավարէին, Պարսկաստանի թագաւորին պաշտօնեաներուն կողմէ քանդուած է (եկեղեցին) Հայ հերձուածողներու (լուսաւորչականներու) զրդմամբը, եւ արքեպիսկոպոսը վտարուած ու զրկուած է իր հասոյթէն: Ան կ'աղաչէ Նորին Սրբութեանէն յանձնարարական մը Պարսկաստանի Շահին որպէսզի իրեն տրուի թոյլատուութիւն Երեւանի մէջ նոր եկեղեցի մը կառուցանելու համար... եւ հրաման որ իրեն վերադարձուի քաղաքին Ս. Գրիգոր եկեղեցւոյն հասոյթը...» (*)

Ս. Գրիգոր եկեղեցի մը անձանօթ է ինծի Երեւանի մէջ:

Գալով հոռոմէադաւաններու եկեղեցւոյն ի Երեւան քանդումին մասին Հ. Ալիշան տարբեր բան կը պատմէ: «Հ. Գարբիէլ Շինոն վեղարաւոր միանձն, որ ամս յալովս քարոզեալ էր ի Հայս, կառոյց անդ (Երեւան) եկեղեցի մի սատարութեամբ Չէլէպի Ազարեայի ուրումն մեծատան, այլ միաբանք էջմիածնի ի ձեռն խանին ետուն փակել զայն, եւ ըզ-Շինոն խոշտանդեցին, որ եւ յետ սակաւ աւուրց մեռաւ (1668) եւ թաղեցաւ ի դերեզմանս վարդապետաց Հայոց, յորոյ վերայ հաւատարիմք նորին (Շինոնի) զրեցին արձան հայերէն այսպէս՝ իտալատառիւք, ըստ աւանդելոյ մեզ միոյ

(.) A Chronicle of the Carmelites in Persia, 1939, Ա. հատոր էջ 412: